Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Գորկի փողոցի հիմնանորոգում:
Մարզ	Արմավիր
Համայնքը /համայնքները	Արմավիր համայնք / ք. Արմավիր
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	48 կմ, 0 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	64, 211 / 38,496 մարդ
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Ոչ
Բարձր լեռնային համայնք /բնակավայր	Ոչ
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Այո, 11.02.2010թ.(ք. Արմավիր) Ոչ՝ համայնքի մնացած բնակավայրերում
Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	Արմավիր քաղաքը ամբողջովին ապահովված է 24-ժամյա ջրամատակարարմամբ: Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացնում է <<Վեոլիա ջուր>> ընկերությունը: Անձրևատար կոյուղի կա միայն Երևանյան փողոցում: Քաղաքի բնակչության մոտ 82%-ը ապահովված է գազամատակարարմամբ: Ոռոգման համակարգը ընդգրկում է ոռոգվող տարածքների մոտ 80%-ը և հիմնականում ջուրը ազգաբնակչությանը մատակարարվում է խորքային հորերի միջոցով՝ համայնքային ՀՈԱԿ-ի կողմից: Գյուղ նշանակության հողերը ոռոգվում է ՋՕԸ-ի կողմից և ընդգրկում է գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մոտ 85%-ը: Էլեկտրամատակարարումն իրականացվում է համայնքի ողջ տարածքում: Քաղաքի կենտրոնական փողոցները և բակային տարածքները հիմնականում ապահովված են գիշերային լուսավորությամբ: Երկրորդային փողոցների և բակային տարածքների լուսավորության ապահովումը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է <<Արմավիր քաղաքի լուսավորություն>> ՀՈԱԿ-ի միջոցով՝ տեղադրելով ԼԵԴ լուսատուներ: Քաղաքի փողոցների մոտ 95% -ը ապահովված է

	լուսավորությամբ: Համայնքի մասը կազմող մնացած գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների կարգավիճակը միանման է. ոռոգվում է գյուղական բնակավայրերի տարածքների մեծ մասը, խմելու ջուրը մատակարարվում է միջինում օրական 2 ժամ՝ խորքային հորերի միջոցով, փողոցային լուսավորությունը ընդգրկում է ընդհանուր փողոցների մեծ մասը, սակայն քիչ տոկոս է կազմում LED էներգախնայող լուսատուներով փողոցները:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Արմավիր քաղաքի Մ. Գորկի փողոցը կառուցապատվել է 1960-70-ական թվականներին: Հիմնանորոգման աշխատանքներ չեն իրականացվել, իրականացվել է միայն մասնակի փոսալցման աշխատանքներ: Նշված փողոցը համարվում է քաղաքի կենտրոնական փողոց, ունի կարևոր նշանակություն. ապահովում կապը քաղաքային գերեզմանատան և զինվորական զորամասի հետ: Հիմնանորոգման աշխատանքները կնպաստեն քաղաքի խիստ ծանրաբեռնված փողոցների լիցքաթափմանը: Ծրագիրն իրականացնելուց հետո կբարելավվի մոտ 38000 բնակչի՝ բարեկարգ պայմաններում ապրելու հնարավորությունը: Մարդիկ կունենան տեղաշարժվելու բարենպաստ պայմաններ, համայնքային տրանսպորտը առանց խոչնդոտների կսպասարկի բնակչությանը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Բարեկարգ համայնք ունենալու և պահպանելու կարևորագույն գործոններից են ժամանակակից և զարգացած ենթակառուցվածքները, որտեղ իր ուրույն տեղն ունի ճանապարհային ցանցը՝ ասֆալտապատ երթևեկամաս, բարեկարգ մայթեր, կազմակերպված ջրահեռացում, ճանապարհային նշաններով կահավորվածություն, գծանշումներ և լուսավորվածություն: Արմավիր համայնքի 2021-2026 թթ ՀՀՀԶԾ-ով սահմանված ռազմավարական կարևորագույն ուղղություններից է համարվում ճանապարհաշինությունը, որի իրականացումը միայն համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ, նախատեսվում է այն իրականացնել սուբվենցիայով տրամադրվող համաֆինանսավորմամբ և այլ ծրագրերի միջոցով :Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք բարեկարգ, մաքուր, անվտանգ,հարմարավետ համայնք ինչպես նաև մարզկենտրոն՝ քաղաքի բնակիչների և այցելուների համար : Կտոխվի համայնքի բնակչության ապրելակերպը, կյանքի որակը, կնպաստի բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, կնպաստի բիզնես միջավայրի զարգացմանը, ներդրումների խթանմանը, անվտանգ երթևեկության կազմակերպմանը: Փողոցի հիմնանորոգման արդյունքում կբեռնաթափվի կենտրոնական փողոցների երթևեկությունը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Ծրագրով նախատեսվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները՝ - Կատարել հիմնանորոգման ենթակա ճանապարհի երթևեկելի

	մասի, մայթերի ծածկի ուսումնասիրություն, վիճակի գնահատման և ցանկալի արդյունքի հասնելու համար համապատասխան արձանագրությունների կազմում : - Կատարված ուսումնասիրության փվյալների հիման վրա ճշգրիտ և մասնագիտորեն հիմնավորված տեխնիկական բնութագրի կազմում՝ առաջնորդվելով գործող նորմատիվային պահանջներով, ստանդարտներով և շինարարական նորմերով: - Ծրագրի ցանկալի արդյունք ապահովելու նպատակով նախատեսել աշխատանքների նկատմամբ տեխնիկական, հեղինակային և լաբորատոր փորձարկումների իրականացում: -Կատարել նախագծի փորձաքննություն: Վերը թվարկված աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև ծրագրի ամբողջական փաթեթը մարզպետարան ներկայացնելը՝ մինչև ս/թ ապրիլի 27-ը : - Նախատեսվում է կատարել հետևյալ տեսակի և ծավալի աշխատանքներ՝ Գորկու փողոցի հիմնանորոգում. Երթևեկելի մասի երկարությունը-1420 գծմ Լայնությունը-11,5 գծմ 1. Ճանապարհի երթևեկելի մասի ասֆալտապատում- 17843 մ2 2. Մայթերի ասֆալտապատում- 0 3. Բազալտե եզրաքարերի փոխարինում և տեղադրում - 3300 մ 4.Հիմնային աշխատանքներ ճանապարհային նախաշերտով - 17843 մ2 5. Ջրատար առուների, խողովակների կառուցում – 111,5 մ Ծրագրի իրականացման համար համայնքը պատրաստ է ներդնել 178851023 ՀՀ դրամ, որը բյուջեի ֆոնդային մասում առկա է: Նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար գումար բյուջեում նախատեսված է:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Հիմնանորոգման ենթակա ճանապարհը համարվում է Արմավիր համայնքի սեփականություն: Նախատեսվող ծախսերը համարվում են կապիտալ և հիմնական միջոցների ներդրման արդյունքում կբարձրանա գույքի հաշվեկշռային արժեքը:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Փողոցի կառուցման և նորոգման արդյունքում կավելանա մոտ 38000 շահառուի հարմարավետությունը, ծրագրի իրականացումը կնպաստի տրանսպորտի անվտանգ երթևեկության ապահովմանը և հետիոտնի ազատ տեղաշարժմանը: Կբարձրանա ճանապարհին հարող տարածքներում գտնվող պետական և մասնավոր հատվածի կազմակերպություններից և սպասարկման օբյեկտներից օգտվողների հարմարավետությունը: Հիմնանորոգվող Մ. Գորկի փողոցը գտնվում է քաղաքի կենտրոնական հատվածում և համարվում է գլխավոր: Փողոցն

	ունի կարևոր նպատակային նշանակություն, փողոցին հարող տարածքում գտնվում է բազմաթիվ առևտրային և այլ կենսական նշանակության օբյեկտներ, ինչպես նաև դպրոցներ, մանկապարտեզներ և բնակելի տներ: *Հիմնանորոգման արդյունքում կբարելավվի վերոհիշյալ կառույցներից օգտվողների հարմարավետությունը և մատչելիությունը: Կբարելավվի մարզկենտրոնի կարգավիճակ ունեցող Արմավիր համայնքի արտաքին տեսքը, որն իր հերթին կնպաստի ձեռնարկատիրության գործունեությանը և ներդրումների խթանմանը, իր ազդեցությունը կթողնի նաև շրջակա միջավայրի պահպանման վրա:*
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	*Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն 36 ժամանակավոր և 4 հիմնական աշխատատեղեր՝ կապված փողոցների պահպանման, սանիտարական մաքրման, կանաչապատման աշխատանքների կատարման հետ:*
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ 1246870,5 դրամ.* *Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝*	1246870,5	1262580,1	101,3
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1133261,7	1149321,5	101,4
- Սեփական եկամուտներ	511638,5	527824,0	103,2
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	113608,8	113258,6	99,7
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	1507550,8	1259769,1	83,6
- Վարչական բյուջեի ծախսեր	1133261,7	1000588,6	88,3
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	374289,1	259180,5	69,2
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, *որից՝*			
- ճանապարհաշինություն	346389,7	279508,9	80,7
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն	9758,2	9462,4	97

- գյուղատնտեսություն			
-			
-			

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	*2091514,0* դրամ. *Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	3104706,0
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	2091514,0
- սեփական եկամուտներ	1013192,0
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	-
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	2234821,0
- Վարչական բյուջեի ծախսեր	1873211,0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	361610,0
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից՝*	
-	
-	
-	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	2091814, որից համահարթեցում՝ 1078321,6
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ **- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 720000դրամ,** **- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 145000դրամ,** **- ինժեներաերկրաբանականհետազոտությանծառայությանարժեքը՝ 0 դրամ,** **- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 3803892 դրամ,**	**275155420 դրամ (100%)**

- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 1521552 դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	178851023 դրամ (65%)
Այլ ներդրողներ	0 դրամ (.... %)
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը հունիս 2022թ. Տևողությունը 5 ամիս (150 օր)
Ծրագրի ծախսերը	*Մանրամասն ներկայացնել ծախսերը՝ կցելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը:* *Ծրագրով նախատեսվող ծախսերը պետք է լինեն իրատեսական, ֆինանսական հաշվարկները և նախահաշիվները՝ հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն:* *Սարք-սարքավորումների ձեռքբերման դեպքում ներկայացնել հնարավորինս հստակ, հիմնավոր և մանրամասն տեխնիկական բնութագրերը, ֆինանսական գնահատականները և առնվազն երեք կազմակերպությունների կողմից տրված գնահարցումները:*
Ամսաթիվ	*27 հունվարի 2022թ.*

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

Խ. Մկրտչյան , հեռ.՝ 091217412, khachikmkrtchyan1@gmail.com

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ
(անունը, ազգանունը)

Կ.Տ